ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի հայրենակիցնե՛ր, ի սրտե շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Մարդկության պատմությունը ոտք դրեց նոր՝ 2015 թվականը: Ճանապարհելով հին տարին, մենք ի մի ենք բերում մեր ձեռքբերումները, ամփոփում այն ամենը, ինչը որ իրականություն ենք դարձրել:

Այսօր հստակորեն կարող ենք ասել, որ տարին առաջընթացի լուրջ քայլ էր, լի՝ հուսադրող ձեռնարկներով, իրականացրած ծրագրերով: Այդ ամենի մեջ առանձնակի հպարտությամբ ենք փաստում մեր երկրի զինված ուժերի հաջողությունները, որոնք վերստին ապացուցում են, որ մեր նախնիների երազած անկախ ու ազատ հայրենիքը ապահով եւ վստահելի ձեռքերում է:

Տարեմուտի շեմին, անկասկած, նոր ծրագրեր ու անելիքներ ենք նախատեսում, որոնք իրականացնելու ենք միահամուռ եւ միասնական ուժերով: Դրանք միտված են երկրի կայուն եւ հաստատուն առաջընթացի ապահովմանը, սահմանների անառիկության ու անվտանգության պահպանմանը:

Կրկին շնորհավորում եմ ամենքիս, մաղթում եմ բարեկեցություն, երջանկություն, խաղաղ ու ստեղծագործ կյանք:

Շնորհավո՛ր նոր՝ 2015 թվականը: